Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության

Միջև

«Շրջանակային ծրագիր՝ ուղղված ԵՄ-Հայաստան համաձայնագրերի իրականացմանը» Ֆինանսավորման Համաձայնագրի

Լրացում N 2

ԵՀՔԳ/2011/023-010

Հատուկ պայմաններ

Եվրոպական հանձնաժողովը, այսուհետ՝ **Հանձնաժողով**, ի դեմս Եվրոպական Միության, այսուհետ՝ **ԵՄ**,

մի կողմից, և

Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ **Շահառու**, ի դեմս Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության,

մյուս կողմից,

համաձայնեցին հետևյալի վերաբերյալ.

2012թ. հոկտեմբերի 23-ին ուժի մեջ մտած «Շրջանակային ծրագիր՝ ուղղված ԵՄ-Հայաստան համաձայնագրերի իրականացմանը» ԵՀՔԳ/2011/023-010 ֆինանսավորման համաձայնագրի հետևյալ դրույթները, («Ֆինանսավորման համաձայնագիր»), փոփոխված են հետևյալ կերպ.

ՀՈԴՎԱԾ 5. ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1 Ֆինանսավորման համաձայնագրի կատարման ժամկետը, ինչպես սահմանված է Հավելված I-ի (Ընդհանուր պայմաններ) 4-րդ Հոդվածում, սկսվում է Ֆինանսավորման համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից և ավարտվում այդ օրվանից 108 ամիս անց:

5.2 Գործառնական փուլի իրականացման տևողությունը 84 ամիս է:

5.3 Ավարտական փուլի տևողությունը 24 ամիս է:

Ֆինանսավորման համաձայնագրի մյուս բոլոր ժամկետները և պայմանները մնում են անփոփոխ:

Սույն լրացումն ուժի մեջ կմտնի այն ամսաթվից, երբ Հանձնաժողովը Շահառուի կողմից ստանա դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի ավարտումը հաստատելու մասին ծանուցումը:

Կազմված է երեք բնօրինակից. երկու օրինակը հանձնվում է Հանձնաժողովին, մեկ օրինակը՝ Շահառուին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ՝

Լոուրենս ՄԵՐԵԴԻԹ

Արևելյան հարևանության տնօրեն
Հարևանության և բանակցությունների ընդլայնման հարցերով
Գլխավոր տնօրինություն
Եվրոպական հանձնաժողով

Ստորագրություն՝

ՇԱՀԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ

Արծվիկ ՄԻՆԱՍՅԱՆ

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար
ԵՄ աջակցության ազգային համակարգող
ՀՀ կառավարություն

Ստորագրություն՝

Ամսաթիվ՝ 25 սեպտեմբերի 2018թ.

Սույնով հավաստում եմ, որ կցված տեքստը 2018թ. սեպտեմբերի 4-ին և 25-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև «Շրջանակային ծրագիր՝ ուղղված ԵՄ-Հայաստան համաձայնագրերի իրականացմանը» ֆինանսավորման համաձայնագրի N 2 լրացման անգլերեն ստորագրված տեքստի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

Հայաստանի Հանրապետության
Արտաքին գործերի նախարարության